**2019 - 2020 թթ**

**Պատասխաններ հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի առաջադրանքների**

**11-րդ դասարան**

1. Շնորհակալ եմ առաջարկի համար: Սակայն պիտի մերժեմ, որովհետև ինձ է սպասում անավարտ տաճարս Անի քաղաքիս: Շատ հաճելի է ինձ մատուցվող պատիվը, բայց հայրենիքս առավել թանկ է:
3. *ակնապարար* – ակնահաճո, աչքը պարուրող, աչք շոյող, *սեթևեթել* – նազել, պչրել, ծեքծեքել, *տարաթույր* – տարագույն, երփնաթույր, գույնզգույն, վառվռուն, *անըստգյուտ* –անթերի, կատարյալ, նմանը չունեցող՝ չգտնվող, *անձեռակերտ* – ձեռքով չկերտված, ձեռք չդիպած, հրաշակերտ, *խաթարվել* – խախտվել, աղավաղվել, փչանալ, աղարտվել, *անզուգական* –անթերի, կատարյալ, աննման, եզակի, զույգը՝ նմանը՝ հավասարը չունեցող, *մանրակերտ* – որևէ կառույցի փոքր չափերով շինվածքը, *երանելի* –տենչալի, փափագելի, ըղձալի, ցանկալի, շատ սպասված, *գոտևորել* – շրջապատել, չորսբոլորը եզերել, օղակել
4. Պատերին արված դրվագները շքեղ տեսք էին տալիս սրահին: Այդ ֆիլմից ընդամենը մի քանի դրվագ եմ տեսել: Գրքի վերջին դրվագում բացահայտվեց տղայի ով լինելը:
5. *գեղուղեշ* – գեղեցիկ ճյուղեր ունեցող, *երիցս* – երեք անգամ, երրորդ անգամ, *ազնվազարմ* –ազնվական տոհմից սերած, *խորշակահար*–խորշակից՝ հողմից ծեծված, *հողմաղաց* – քամու ուժով աշխատող աղաց՝աղորիք, *թռուցկաժողով* – թռուցիկ՝ կարճ տևող ժողով
6. ձեռնածու, քառակուսի, արյունարբու, լուսանցք
7. պսակ գմբեթ, լույս կառույց, փլուզված գմբեթ, լքված դատարկություն, հավերժող հաղթանակ, արծվենի հայացք, անձեռակերտ տաճար, յուրաքանչյուր դրվագ, այդ դատարկությանը, ոչ մի ճարտարապետ
8. Գնում է դեպի հյուսիս-արևմուտք՝ դիտելու երկիրը: Եվ այնտեղից վերադարձավ իր աշխարհը:

**Գնահատման չափանիշներ**

հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարի

**11-րդ դասարան**

3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: